Հավելված N 3
ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի
մայիսի 30-ի N 265-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմը ստորև ներկայացնում է իր կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՍՄԱ-ՄԱԱՊՁԲ-2025/2 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի փետրվարի 21-ին կնքված N ՀՀՍՄԱ-ՄԱԱՊՁԲ-2025/2 պայմանագրում 2025 թվականի սեպտեմբերի 19-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ ՝ 10.09.2025թ. «ԳՈՐՇ ԱՐՋ»ՍՊԸ-ի գրությունը (գործունեության դադարեցման վերաբերյալ)

Փոփոխության նկարագրություն՝ կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին լուծել № ՀՀՍՄԱ-ՄԱԱՊՁԲ-2025/2 գնման պայմանագիրը՝ չմատակարարված ապրանքների մասով

Փոփոխության հիմնավորում՝ պայմանագրի 8.5 կետը:

Պատվիրատու՝ ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմ

Համաձայնագիր № 1

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի և «Գորշ արջ»ՍՊԸ-ի միջև 2025թ-ի փետրվարի 12-ին կնքված N «ՀՀՍՄԱ-ՄԱԱՊՁԲ-2025/2» պայմանագիրը լուծելու մասին

ք.Կապան 10 սեպտեմբեր 2025թ

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմը, ի դեմս գլխավոր քարտուղար Էդգար Մարտիրոսյանի, որը գործում է ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԳՈՐՇ ԱՐՋ»ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս.Ոսկանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից (երկուսը միասին կհիշատակվեն որպես Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ և հիմք ընդունելով Կողմերի միջև 2025թ-ի փետրվարի 12-ին կնքված N ՀՀՍՄԱ-ՄԱԱՊՁԲ-2025/2 պայմանագրի 8.5 կետը, ինչպես նաև հիմք ընդունելով «ԳՈՐՇ ԱՐՋ»ՍՊԸ-ի 16.06.2025թ. գրությունը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին լուծել № ՀՀՍՄԱ-ՄԱԱՊՁԲ-2025/2 գնման պայմանագիրը՝ չմատակարարված ապրանքների մասով:

2. Այլ պայմաններ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2.Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից դադարում են վերոհիշյալ պայմանագրով Կողմերի պարտավորությունները:

2.3. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը:Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմ	«ԳՈՐՇ ԱՐՋ»ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք.Կապան, Գ.Նժդեհի 1	ՀՀ ք.Կապան, Ռ.Մելիքյան 8/1
Կենտրոնական գանձապետարան	«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 900001161117	Հ/Հ 2470801905200010
ՀՎՀՀ 09430281	ՀՎՀՀ 09409237
Գլխավոր քարտուղար Է. Մարտիրոսյան	Տնօրեն Ս.Ոսկանյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ